երդուել եմ սատկեցնել Քեռի Պետրոսին··· Նա իմ հօր (*որսորդ Աւօր· Վ· Մ·*) թշնամին է:

— Եթէ օձը մի հատ լինէր, կը շարունակէ Ասլանը, պէտք էր նրա գլուխը ջարդել··· բայց դժբախտաբար նրանց թիւը շատ է: Ես եղել եմ Ասիական Տաճկաստանում, Կոստանդնուպոլսում, Եգիպտոսում··· ամէն տեղ, ուր կան հայեր··· ես տեսել եմ, որ սկսած ամենաստոր քուրտ իշխանի տունից, սկսած նահանգական կուսակալ փաշաների դռնից մինչեւ վէզիրների դռները, մինչեւ Սուլթանի բարձրագոյն դուռը, բոլորը բռնուած են Քեռի Պետրոսներով: Եւ որքան մեծ անձի մօտ է նրանց ծառայութիւնը, այնքան մեծ է եւ նրանց վնասակարութիւնը···

«Յոյնը անհաւատարիմ է», ասում է թուրքը, եւ նրա վրայ վստահութիւն չունի, նրան գործ չէ յանձնում: Դա իրաւ է··· Յոյնը··· չէր կարող հայի պէս իրան այնքան ստորացընել··· հաշտուել իր ատելի թշնամու հետ, իր երկիրը տիրողի եւ իր ազգակիցներին ստրկացընողի հետ: Այս պատճառով յոյն դրամատէրները չուզեցին ամիրաներ, սառաֆներ եւ տէրութեան կապալառուներ դառնալ· նրանք ձեռք առին ազատ վաճառականութիւնը···

Թողնենք մանր Քեռի Պետրոսներին, անցնենք դէպի խոշորները: Սուլթանի դռան համարեա ամբողջ տնտեսական եւ զանձային կառավարութիւնը հայ *սառաֆների* ձեռքումն է: Նրանք կրում են աւելի բարձր տիտղոսներ,— կոչւում են *ամիրաներ*··· Կառավարութիւնը տալիս է գաւառների հարկահաւաքութիւնը··· փաշաներին կապալով: Բայց նա փաշայի վրայ վստահութիւն չունի, թէ նա իր ժամանակին կը ներկայացնէ նշանակած տուրքը: Փաշան պէտք է մի երաշխաւոր տայ: Ամիրա սեղանաւորը միշտ պատրաստ է այս երաշխաւորութիւնը իր վրայ ընդունելու, որովհետեւ··· փաշայի կապալառութեան վաստակի մասն էլ ինքը պիտի վայելէ: Բայց ո՞րտեղից է գոյանում վաստակը: — Բիւրաւոր թշուառ հարստահարուածների քրտինքից···

··· Բայց նոյն ամիրաներն են մեր *ազգապետները*· նրանք են դարձնում մեր ազգի կառավարութեան սանձը դէպի ամէն կողմ, որ··· իրանց համար հանելի է··· Նրանց համար միշտ ձեռնտու է մի անկարգ եւ բռնակալ կառավարութիւն, որի պղտորութեան մէջ կարողանում են որսալ իրանց շահերը···

Եւ այսպէս, մեր դրամատէրները ··· փոխանակ օգնելու, որ մշակը եւ գիւղացին հաց ու հանգստութիւն ունենան··· աւելի իրանք են ամրացնում նրանց ստրկութեան շղթաները»··· (*«Կայծեր»*, *հատ· Ա· էջ* 443–449):

Ապա կը նկարագրէ գաւառացի հայ աշխատաւոր ընդհանրութեան վիճակը Վասպուրականում՝ մանր վաճառականներու, վաշխառուներու ճանկերուն մէջ: Ասոնք ալ «մանր հարստահարողներն» են, «փոքրիկ աւազակները»···

«Մեր գիւղացիները միշտ փողի կարօտութիւն ունին հարկեր վճարելու··· եւ այլ կենսական պահանջների համար: Փողը նրանք ընտանում են վաճառականից, ի հարկէ, ծանր տոկոսներ վճարելով··· Գալիս է պարտքը վճարելու ժամանակը· գիւղացին փող չունի որ տայ, վաճառականը յափշտակում է նրա բոլոր երկրագործական արդիւնքը կէս գնով: Այսպիսի աւազակները կը ցանկանա՞ն, որ գիւղացու վիճակը բարւոքուի, կը ցանկանա՞ն, որ նա փողի կարօտութիւն չունենայ: Աւելացընենք դրա վրայ քրդի, թուրքի, տէրութեան հարկահաւաքների հարստահարութիւնները·— խե՜ղճ գիւղացին ինչո՞վ կարող է այս բոլորին բաւականութիւն տալ··· Նա մնում է միշտ աղքատ··· եւ այդ պատճառով ստիպուած է թողնել հայրենի հողը եւ օտար երկրներում բախտ որոնել··· Միայն Կոստանդնուպոլսում այժմ 40 հազար հայ պանդուխտներ կան եւ նրանց մեծ մասը վանեցիներ են··· Տաճկաստանի բոլոր քաղաքները լցուած են հայ մշակներով կամ համալներով·— բայց դրանք մեր երկրի գլխաւոր ուժերն են, որ մաշւում են, ոչնչանում են պանդխտութեան մէջ»···

VII.

Իբրեւ լուրջ ու պարկեշտ գրող, որ խորապէս գիտակից է իր մեծ եւ դժուարին կոչումին, իբրեւ մէկը այն մտաւորական առաջնորդներէն, որոնց վիճակուած էր դարբնելու ստրուկ ու հալածական ցեղի մը — հարազատ ցեղի — ճակատագիրը, Բաֆֆին երկար տա-